« թէ ի Մուսուլ քաղաքն առիւծուն ահուն՝
« գիշերն այլ մարդն դուրս չի ելանէր , այլ
« կանայք երթան , թէ ջուր և այլ իրք պի֊
« տանի լինայ. զի զկանանց ազգն՝ մարդոյն
« տեղ չի դնէր ։ թէ քարամբ կամ փայտիւ
« քշեն զնա պառաւքն՝ փաս չի առնէր
« նոցա , թողու և երթայ ։ — Եւ աչքն՝
« գիշերն իբրեւ զմոմ լոյս կու տայ · և յոր֊
« ժամ նաւավարքն ծովեզերն Ջէնճ (ցից)
« հարկանեն և նաւ կապին , և իւրեանք
« երթան ի նաւն , զայ առիւծն և տեսանէ
« զձիծն և զնաւն կապեալ , նստեալ հեռե֊
« ւանց պահէ , և զաչքն խփէ որ աչիջ՝ լոյսն
« չի տեսանեն և չի գիտենան. և յորժամ
« նաւավարքն ի ցամաք ելանեն՝ որ արձակեն
« զնաւն ի ձիծէն , յայնժամ որսայ և պա֊
« տառէ զնոսա , զարիւնն ծծէ , և զմիսն
« միայն ուտէ ։ — Ոմանք ասեն , թէ սպի֊
« տակ խօսողին (աքաղաղ) և սիրամարգին
« ձայնէն զարհուրի և կու փախչի. զարմանք
« այս է , որ այլ անասունքն ի ձայնէն նորա
« զարհուրին և ահուն արիւն կու մի են · և
« նա խօսօղին և սիրամարգին ձայնէն կու
« փախչի » ։

« Օգուտն (Առիւծու). թէ ակռան ի հետդ
« պահես , կամ ցաւած ակռայիդ վրայ բռնես ,
« ակռադ չի ցաւի ։ Եւ թէ իւր լեղուն՝ քիչ
« մի մարդ ուտէ՝ քաջասիրտ լինի · և իւր
« միջի եղն՝ պէվասըռին (թանջախտ քսես՝
« ողջանայ · և թէ իւր եղն երեսդ քսես ,
« ամենայն պատառօղք գազանք ի քէն փախ֊
« չին · և թէ եղն տուն մի լինի , մկունք
« և կարիճք այն տեղացն փախչին ։ Եւ թէ
« երկու աչիջ միջի եղն երեսդ օծնես , ի մէջ
« մարդկանց ահարկու երեւիս , և ումեքէ չի
« վախես ։ Եւ թէ իւր ձեռքն վրադ պահես ,
« պատառօղ գազանաց ահ չի կրես. և թէ
« հանապազ իւր մորթուն վրայ նստիս՝ պէ֊
« վայըրն և սունկն ողջանայ Աստուծով ։ Եւ
« թէ որ մարդն՝ գող կամ ջերմն բռնէ իւր ,
« առիւծուն մորթուն վերայ պառկեցընեն և
« ծածկեն որ քրտընի , փարատի ջերմն ,
« Աստուծով » ։

« Եզն զօրաւոր է և ուժեղ քանց առիւծն.
« յորժամ իրար կու ձգեն եզն և առիւծն
« և կռուեցընեն , եզն կու կապեն պարա֊
« նաւ , և զառիւծն ի վերայ կու թողուն
« առանց կապ. և թէ կարէ առիւծն պօրղըակն
« (թր. պէօվրէք, երիկամունք) բռնել կամ ի
« վերան հեծնուլ , կամ յետեւանց զձըւէրն
« խածանել , ապա կարէ յաղթել և պատառ֊
« ռել զեզն և սպանանել. և թէ ոչ կարէ
« այնմ տեղացն բռնել , եզն , եղջիւրաւն
« հարկանէ յորովայնն առիւծուն և սատակէ
« զնա. ապա թէ եզն առանց պարանու
« թողուն , ամենեւին առիւծն չէր կարեր
« մօտենալ եզանն. զի անչափ է ուժն եզանն
« քան զամենայն չորքոտանիսն ».

Այս սորագրութեան եզերքն այլ տեղ
տեղ յաւելուածք կան , կամ հեղինակէն կամ
ուրիշէ գրուած ինչպէս , « թէ առիւծուն ակռան
« փոքր տղայոց վիզն կապեն , այլ ակռացաւ
« չի տեսանէ. — թէ առիւծուն մորթուննն
« կտոր մի ի մէջ կումաշին դնես , ցեց չի
« ուտէ , Աստուծով ։ — Եւ թէ առիւծուն
« մորթն քերեն և անօսրացընեն և նաղա֊
« ռայ կամ քօս (նուագարանք) հարկանեն ,
« ի ձայնէն նորա անասունքն փախչին. և
« թէ ձին լսէ նաղարային ձայնն՝ ահուն
« հիւանդանայ ։ Առիւծն իմանայ զհոտ որ֊
« սորդին և զգօղն իմանայ , և ագուն հար֊
« կանէ զերկիր . և յորժամ յորս ելանէ
« առիւծն՝ յանկարծակի առնու զհոտ որ֊
« սորդին , սեմի և երկուցեալ փախչի» ։

Աւելագրող բնախօսն՝ բարոյախօս այլ կ՚ըլ֊
լայ , գրելով. « Խրատէ զմեզ գազանս այս ,
« որ զմեզ՝ իբրեւ զկշիռքն դնեմք և զմիտս
« մեր կշռեմք , որ տգիտութեամբ չի յաղ֊
« թուիմք ի թշնամուն , մինչեւ յառաջ իմա֊
« նամք , թէ կարօղ եմք յաղթել , և ապա
« յառաջ երթամք և կռուեմք , և երկմիտ
« չի լինիմք. զինչ որ գործեմք կամ պատե֊
« րազմիմք հետ թշնամոյն՝ յԱստուած ապա֊
« ւինելով անեմք և ոչ ի յոյժն մեր ։ — Տես
« Աստուծոյ ողորմութիւնն , որ անչափ ուժով
« գազանն՝ որ մռչէմն (մրջիւնն) կու վա֊
« տուժցընէ զնա , զի մռչէմքն անչափ ի
« վերայ կու թափին , խածատեն , մինչեւ ի
« մահ տանին զնա ։ Երբ կորիւնն որ ծնանի ,
« մռչըման ահուն՝ ի մէջ ջրալից և չամոյրա֊
« լից տեղրանք կու ծնանի , որ մռչէմն չի
« կարեր գալ ։ Տե՛ս զփեղն , որ անչափ ա֊